ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/1352 «13» 12 2016թ.

«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ք. Երևան, Վ.Վաղարշյան 24/1, բն.43.

Հարգելի պարոն Կարապետյան

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.09.2016 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/124-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Ընկերությունը ստանձնել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության անցկացման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը սահմանված էր՝ 30.09.2016:

Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրություններով տեղեկացրել է Ձեզ, որ Ընկերությունը խախտել է պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի հետ «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–16/124-2» ծածկագրով կնքված գնման պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում է լուծված:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման հավելված N1 հաստատված կարգի 36-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.3 կետով հաշվարկված տույժի գումարը՝ 3212 ՀՀ դրամ (88000x0.05%x73օր=3212) երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 90015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Գ.Մուրադյան
011 514-373